Արձանագրություն N 2-6

ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/8 ծածկագրով ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի բժշկական կենտրոնի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

11.11.2020թ.
ժամը 12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Ա. Միրզոյան
Հանձնաժողովի անդամներ՝	Դ. Շատվերյան
	Ռ. Եղիազարյան
	Գ. Գևորգյան
	Ար. Գրիգորյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Տ. Վասիլյան

1. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից 2020 թվականի նոյեմբերի 6-ին ընդունած թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/112 որոշման կատարման մասին

(Ա. Միրզոյան)

1.1 Հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից 06.11.2020թ. (հրապարակված 10.11.2020թ.) ընդունված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/112 որոշումը, որի կատարումը իրավապարտադիր է՝ գնահատող հանձնաժողովը որոշում է.

ա) ուժը կորցրած ճանաչել գնահատող հանձնաժողովի 07.10.2020թ. նիստի N 2-2 արձանագրության 1.2 կետի՝ <<Արալպլաստ>> ՍՊԸ-ին վերաբերող մասի 2-րդ պարբերությամբ կայացված որոշումը, ինչի արդյունքում էլ համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 41-րդ կետի՝ որոշում է ծանուցել <<Արալպլաստ>> ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 07.10.2020թ. նիստի N 2-2 արձանագրության 1.2 կետի՝ <<Արալպլաստ>> ՍՊԸ-ին վերաբերող մասի 1-ին պարբերությամբ արձանագրված անհամապատասխանությունները:

բ) ուժը կորցրած ճանաչել գնահատող հանձնաժողովի 09.10.2020թ. նիստի N 2-4 արձանագրության 2-րդ կետով <<ԱԳԱԹ-777>> ՍՊԸ-ին առաջարկված գնի նվազեցման նպատակով 14.10.2020թ. բանակցությունների հարվիրելու մասին կայացրած որոշումը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2. ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/8 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Միրզոյան)

2.1 Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել արձանագրված անհամապատասխանությունները <<Արալպլաստ>> ՍՊԸ-ի կողմից շտկելուց հետո, բայց ոչ ուշ քան

13.11.2020թ. ժամը 17:00-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Միրզոյան

Անդամ՝ ---------- Դ. Շատվերյան

---------- Ռ. Եղիազարյան

---------- Գ. Գևորգյան

---------- Ար. Գրիգորյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Տ. Վասիլյան